№ 63 ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 6

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 6 № 63

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Խորին վշտով խոցված Ովսաննա Սարգսեան, Գրիգոր, Գարասիմ և Գէորգ Ղազարեան Յակովբեանները, Եղիսաբէթ Սուքիասեան և Մակա Գալուստեան ցաւօք սրտի յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթ ընկերներին, առաջինը իր սիրելի և անփոխարինելի ամուսնու և վերջինները իրանց թանկագին և անժոռանալի եղբօր՝

ՌՈՒԲԷՆ ՂԱԶԱՐԵԱՆ ՅԱԿՈՎԲԵԱՆՑԻ

վաղաժամ և յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 2-ին։ Յուղարկաւորութիւնը կը կատարվի հինգշաբթի, ապրիլի 7-ին առաւօտեան 10 ժամին իր բնակարանից (Մինկվիցկայա փող. № 5 տուն Ա. Աթոյեանցի Կուկիայում) դէպի Վանքի մայր եկեղեցին։ Ամփիոփը կը կատարվի չորեքշաբթի երեկոյեան 6 ժամին։ Թաղումը տեղի կունենայ Խօջիվանքի գերեզմանատունը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքնավարական կազմակերպութեան գաւառական կորիզը. Տօների առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընթերցողի Օրագիրը. Թիֆլիսի հաշւապահների առիթով. Նամակ Սուխումից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Պարսկաստանից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԻՆՔՆԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿՈՐԻԶԸ

Մեր յօդուածներից մէկում մենք ասացինք, որ մեր երկրի ինքնավարական կազմակերպութեան համար առանձին նշանակութիւն պէտք է ունենան գաւառը և գաւառական ինքնավարութեան իրական ամփոփը։ Գաւառը պէտք է լինի այն հիմնական կորիզը, որը պէտք է ծառայէ իբրև հիմք թէ գաւառական ինքնավարութեան, թէ նահանգական, թէ համանդրկովկասեան ինքնավարութեան և թէ նոյն իսկ, եթէ ապագայում հարկ լինի, համառուսական ներկայացուցչութեան։

Անդրկովկասում մենք ունենք 57 գաւառ։ Այդ հաշւի մէջ են և Սև ծովի ափի նորակազմ գաւառները։ Պէտք է կարծել, որ ապագայում գաւառների թիւը կաւելանայ, որովհետև գաւառներից մի քանիսը շատ խոշոր են և վաղուց պահանջ է զգացվում մի քանի գաւառներ բաժանելու երկու մասի, կամ մի երկու հարևան գաւառից կազմելու երեք գաւառ։ Օրինակ՝ վաղուց դիտաւորութիւն կայ Զանգեզուրի և Նախիջևանի գաւառների այն մասերը, որոնք գտնվում են հին Գօղթանի և Արևիքի շրջանում միացնել և կազմել մի նոր վարչական մարմին, Օրդուբաթեան գաւառ անունով։ Նոյնպէս շատ խոշոր են և վարչական տեսակէտով անյարմար կազմված Գօրիի, Դուշեթի և մի քանի ուրիշ գաւառներ։

Անկասկած, ապագայում գաւառների կազմութեան խնդրում դեր պէտք է կատարեն ոչ միայն վարչական, այլ և մի քանի ուրիշ հանգամանքներ, օրինակ ազգագրական, տեղագրական, հաղորդակցական։ Մենք լաւ գիտենք, որ գաւառում վարչական գործը թեթևանում է, երբ ազգաբնակութիւնը խօսում է մի ընդհանուր լեզուով, երբ նրա բոլոր մասերը միմեանց հետ ունեն արագ և դիւրին հաղորդակցութիւն, երբ առհասարակ մեծ չէ գաւառի զանազան մասերի մէջ եղած տարբերութիւնը։ Թէ առանձին գիւղական հասարակութեան մէջ, թէ վարչական գիւղախմբի ընդհանուր ժողովի մէջ և թէ ապագայ գաւառական զեմսկի վարչութեան մէջ այնքան հեշտ կը լինի ինքնավարութեան գործի առաջ տանելը, որքան աւելի մեծ կը լինի իւրաքանչիւր ժողովի մէջ նրան կազմող մասերի միութիւնը։ Մինչև անգամ մի այնպիսի հանգամանք, ինչպէս է խոշոր հաղորդակցական ճանապարհի, օրինակ երկաթուղու բացվելը, փոխում է երկրի զանազան մասերի միմեանց հետ շփվելու յարմարութիւնների աստիճանը և ստեղծում է մարդկանց միմեանց հետ միասին վարչական կեանք ունենալու համար պահանջվող պայմանները։

Մենք կարող էինք բերել և մի քանի ուրիշ օրինակներ, բայց մեզ այստեղ հետաքրքրում է այն, որ շեշտված լինի որոշ երևոյթ։

Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, անշուշտ, պահանջ կը զգացվի, որ թէ գիւղական հասարակութիւնների միմեանց հետ միացման և թէ գաւառների աւելի նպատակայարմար դասաւորութեան ժամանակ ուշադրութեան առնվեն այն նոր հանգամանքները, որոնք ասպարէզ են եկել կեանքի և ժամանակի ազդեցութեան տակ։

Գաւառի որոշ կազմակերպութիւնը էական նշանակութիւն կունենայ, երբ սահմանված կը լինի ունենալ ներկայացուցիչներ ինքնավարական մարմինների համար և անհրաժեշտութիւն կը զգացվի ընտրութիւններ անելու։ Գաւառն այն ժամանակ աւելի արդարացի, աւելի նպատակայարմար կերպով կը ներկայանայ թէ իր տեղական գաւառական զեմսկի ժողովի, թէ նահանգական և թէ համերկրական ժողովների համար։

Մենք դարձեալ կը խօսենք այս խնդրի մասին։

ՏՕՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Զատկի տօների մասնակցելու առիթով մենք յիշեցնում ենք մեր հասարակութեանը այն խեղճերի և զրկվածների մասին, որոնք տանելով տարվայ ընթացքում ամեն տեսակ նեղութիւններ, մխիթարվում են տօն օրերին մի փոքրիկ օգնութիւն ստանալով բարեգործներից։

Թող իւրաքանչիւրը օգնէ իր շրջանում այն բոլոր մարդկանց, որոնք կարօտութեան մէջ են։ Բայց մենք չենք կարող ուշադրութիւն չը դարձնել այն խեղճերի վրա, որոնք դիմում են մեր խմբագրութեան, հաւատալով, թէ այդտեղ մի գումար հաւաքված կը լինի նրանց օգտին։ Մենք իւրաքանչիւր տարի կարողացել ենք շատ աղքատների նպաստներ տալ և նրանց մի որոշ չափով մխիթարութիւն պատճառել։

Ցանկալի է, որ հասարակութիւնը չը մոռանար այդ զրկվածներին և կարօտներին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

IX

Այս անգամ մի փոքրիկ առաջաբան, մի թեթև զեկուցում բարեկամ-ընթերցողին։ Ես ինքս բաւական չեմ իմ այս յօդուածներից։ Նրանք լոյս են տեսնում անկանոն, ընդհատումներով։ Լոյս տեսածներից մի քանիսն էլ մի տեսակ խուզած, պոչատ կերպարանքով են ինձ երևում։

Ասեմ արդեօք ինչ պատճառով։ Մեզ, գրողներիս, ինչպէս քաջ յայտնի է, տուած է միայն եզոպոսեան լեզու։ Եւ որովհետև ուրիշ, աւելի բնական և պարզ բարբառ դեռ չենք ստացել մեր խնամակալներից, պէտք է մեր այդ եզոպոսեան լեզուով ասեմ, որ վերև յիշած հանգամանքները իմ կամքից ոչ մի կախում չունեն։

Զգում եմ, որ բարեկամ ընթերցողը գոհ չէ իմ այս բացատրութիւնից։ Նա կը կամենար, որ մենք սրատաց, պարզախօս զրուցակիցներ լինենք, կը կամենար որ Աստուծու շնորհած պարգևը մենք գործադրէինք առանց ծռմռելու, առանց թաղցնելու, առանց արհեստական, զօռով ստեղծած մթութեան մէջ խրելու։

Արդարացի, գեղեցիկ ցանկութիւն։ Բայց ի՞նչ կարող եմ ասել ես։

Ահա ինչ։

Ներկայ տարվայ սկզբում լոյս տեսաւ Պետերբուրգում մի ժողովածու։ Քիչ գրքերի է աջողվում այնպիսի մի բախտ, որին արժանացաւ այդ ժողովածուն։ Ընթերցող հասարակութիւնը, կարելի է ասել, մի ակնթարթում յափշտակեց նրան։ գիրքը սպառվեց մի քանի շաբաթների ընթացքում, հարկաւոր եղաւ հապճեպով նոր հրատարակութիւն պատրաստել, որ և այժմ հրապարակի մէջ է և դարձեալ ընթերցողներ է գրաւում։

Այդ ի՞նչ դիւթական ոյժ էր, որ այնքան գրաւչութիւն հաղորդեց ժողովածուին։

Ճիշդ է, նրա մէջ աշխատել են ռուսաց լաւագոյն գրական շատ ոյժեր, բայց գլխաւորը այդ չէ։ Ժողովածուի ճակատին խոշոր տառերով տպված է. «Ի պաշտպանութիւն խօսքի» («Въ защиту слова»)։ Դա նրա անունն է, դա նրա հոգին ու միտքն է։

Ահա այդ է գլխաւորը։

Նրա մէջ պաշտպանվում է խօսքը։ Պաշտպանվում է իւրաքանչիւր տողից, պաշտպանվում է բանաստեղծի ոտանաւորի մէջ, վիպագրողի պատկերի, հրապարակախօսի յիշողութիւնների, պատմաբանի տեսութեան, գիտնականի դատողութիւնների մէջ։

Կայ մի չարատանջ, բայց մեծագործ հերոս, ճակատագրի մի անբախտ որդի, հարիւր ու մի կապանքներով կաշկանդված, հարիւր ու մի հարուածներից վէրքերով ծածկված, արիւնոտ ու արիւնահոս մի հսկայ։ Քանի՞ քանի ձեռքեր են զբաղված նրան զսպելու, նրան սանձահարելու համար։ Նա հերոսաբար տնքում է այդ ծանրութիւնների տակ, ամուր կապերի ցանցերը չեն թոյլ տալիս, որ նա մի փոքր ազատ շարժում գործէ, մի քիչ խոր շունչ քաշէ։ Բայց և այնպէս նա ոյժ է, ամեհի ոյժ։

Պաշտպանում են այդ հերոսին։ Եւ որքան սրտառուչ, որքան համոզիչ է այդ պաշտպանութիւնը։ Կարդում էք սրտի մի աննման մխիթարութեամբ։ Զգում էք, որ կաշկանդանքներից, տանջանքներից պաշտպանվում է մի մեծ նահատակ, մի սուրբ գործ։

Բաւական ստուար հատորի բոլոր յօդուածները խօսում են մի և նոյն առարկայի մասին։ Բայց և այդպէս, չէք ձանձրանում, չէք յոգնում։ Խօսքի մարտիրոսագրութիւնը անհուն է, անվերջ։ Նրա ցաւերը, նրա արկածները մի նոր Շեհերազադէի համար կարող են հազար ու մի գիշերների պատմութեան առարկայ դառնալ։ Եւ ունկնդիրը պիտի լսէ վառ հետաքրքրութեամբ։ Նա չէ կարող չը լսել, քանի որ գիտէ, շատ լաւ գիտէ, որ այդպէս նահատակվողը, այդքան տանջվողը այն իսկ հերոսն է, որ կեանքի զարդարանքը պիտի կազմէր, որ երջանկութեան աղբիւր պիտի դառնար մի ամբողջ աշխարհի, մի ահագին ազգաբնակութեան համար։

Եւ ո՞ւր ասէք, որ չը զգացվի այդ մեծ ճըշմարտութիւնը։

Յայտնի գրող Վ. Կորոլէնկօ պատմում է մի այսպիսի բան։

1891—1892-ի սուվի տարին էր։ Նիժնի-Նովգորոդում նահանգապետը գումարել էր մի խորհրդակցութիւն, որ պիտի պատասխանէր մինիստրութեան կողմից առաջարկված մի քանի հարցերի։ Այդ հարցերը, ի հարկէ, սուվի պատճառները պարզելու համար էին և տված բլանկների վրա առանձին մի կէտ էր կազմում այն հարցը, թէ ի՞նչպէս պէտք է պահպանել գիւղացիների անասունները։ Խորհրդակցութեան մասնակցողներից մէկը, մի հասարակ մարդ, գրել էր այդ հարցի տակ։

—«Անհրաժեշտ է մամուլի ազատութիւն»։

Քարտուղարը զարմացած էր. իսկ նահանգապետն ասաց.

—Դուք, երևի, սխալվել էք։

—Ո՛չ, ձերդ գերազանցութիւն, ես չեմ սխալվել,—պատասխանեց նա։

Եւ յետոյ, դրսում, ի հարկէ, նա բացատրեց հեղինակին թէ ինքը կատարեալ իրաւունք ունէր գիւղական անասունների պահպանութիւնը կապել մամուլի ազատութեան հետ։

—Անցեալ տարի, ասաց նա, գիւղացիներն արդէն սոված էին, բայց սով պաշտօնապէս չէր ճանաչվում։ Եւ ոստիկանութիւնը եռանդով ծախում էր անասուններին ապառիկ հարկերի համար։ Ես այդ մասին մի նամակ ուղարկեցի լրագրին։ Ասացին՝ տպել չէ կարելի, արգելված է։ Իսկ այսօր հարցնում են թէ ինչպէս պահպանել այն անասուններին, որ հէնց իրանք ծախել են ոչինչ գներով։ Իրաւունք չունէ՞ք...

Խօսքի ընկճված դրութիւնը հազարաւոր այսպիսի փաստեր ունի։ Ամբողջ ժողովածուն լիքն է դրանցով։ Պատմել, մանրամասնութիւններ տալ,—կարելի՞ է մի թէ։

Ո՛չ։ Ինքը ժողովածուն ցոյց է տալիս որ խօսքը մայրաքաղաքներում դեռ այնքան կապված չէ, ինչպէս գաւառներում։ Գաւառական մարտիրոսագրութիւնների չափն ու հանգամանքները ուղղակի լեգենդական բնաւորութիւն են կրում։

Եւ ընթերցող հասարակութիւնը յափշտակութեամբ կարդում է ամբողջ հատորը։ Եւ կարդացողը, դժբախտաբար, չէ կարող ասել թէ դա «վաղուց անցած օրերի գործ է, խորին հնութեան աւանդութիւն»։

Դա օրվայ իրականութիւնն է։

Եւ երբ կը դառնայ աւանդութիւն, անցեալի երազ, ծանր յիշողութիւն...

Լ.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՇԻԱՊԱՀՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Թիֆլիսի գործակատարներն ու հաշւապահները սրանից մի քանի օր առաջ գործադուլ անելով, կարողացան, մասամբ, իրանց ցանկութիւնները ի կատար ածել։

Լինելով ես հաշւապահ և ծանօթ ու տեղեակ մեր ծառայողների և խղճայինների կեանքին, հարկաւոր եմ համարում մի քանի քօղարկված խնդիրներ երևան հանել, յոյս ունենալով, որ կարող անձինք այս մեր թաղված ցաւերն էլ կը բժշկեն։ Խօսքս խանութներում ծառայող հաշւապահների և նրանց խղճայինների մասին է։

Բոլորին յայտնի է, որ կանոնաւոր հաշւապահ լինելու համար, հարկաւոր է գոնէ ունենալ քաղաքային ուսումնարանի դասընթաց աւարտելու վկայական կամ գիտենալ լաւ մաթեմաթիքա և ռուսերէն լեզուն (հաշի չեմ առնում տեղական լեզուները, որոնք նոյնպէս անհրաժեշտ են)։

Այս էլ յայտնի է մեզ, որ հաշւապահների կարիքը աւելի է զգացվում միայն Թիֆլիսում, Բագուում, Բաթումում, իսկ Կովկասի մնացած քաղաքներում, կարող եմ ասել, որ վաճառականների 3—5% չեն պահում հաշւապահները։

Հաշւապահական մասնաւոր դպրոցներ այստեղ 5—6 հատ կան, կան և ուրիշ քաղաքներում էլ, որտեղ ամեն տարի հարիւրաւոր երիտասարդներ ու օրիորդներ են աւարտում, բայց արդեօք կայ կամ լինում է այդքան ազատ տեղեր նրանց ընդունելու։—Ամենևին։

Ես գիտեմ այս բօպէիս շատ երիտասարդներ, որոնք այդ մասնաճիւղը սովորելու համար ծախսել են 3—5 հարիւր բուբլի և, ամիսներով թափառելուց ու գործ չը գտնելուց յետոյ, ստիպվել են բոլորովին ուրիշ գործերով զբաղվել... Ցաւալին այն է մանաւանդ, որ

համարձակվում են հաշւապահութիւն սովորել այնպիսի մարդիկ, որոնք չորս գործողութիւնը և կոտորակները միայն «зубрить» են արել և «хлѣбъ» չեն կարող առանց սխալի գրել... Այո՛, ես ճանաչում եմ նոյնպէս այնպիսի մարդիկ, որոնք թողել են կօշկակարութիւնը, կօնկի կօնդուկտորութիւնը և գնացել ու հաշւապահութեան կուրսերն են անցել... Եւ այդպիսի անձնաւորութիւններ հաշւապահի անունը կրելով, ոմանք իրանց ազգականների ու բարեկամների շնորհիւ գործի են մտել, ոմանք օգտվելով խաղեայինների ագահութիւնից ու փողասիրութիւնից, իրանց գործերին հմուտ, հաւատարիմ և 50—80 ռուբլի ռոճիկ ստացող ծառայողներին դուրս հանել են տուել և, իրանք 20—25 ռուբլով ծառայել են, իսկ ոմանք էլ չը կարողանալով հաշիւներ պահել, միւս օրն և եթ արձակվել են խաղեայիններից, նսեմացնելով բոլոր հաշւապահներին և նրանց վարկը կոտրելով։

Այսօր, Թիֆլիսում տասնեակներով բանիմաց և ուսումնաւարտ հաշւապահներ կան, որոնք կամ պարտ են կամ ճարահատեալ պարտաւորված են իրանք էլ հաւասար իրանց պաշտօնակից տգէտ ընկերների, ծառայել շատ չնչին ռոճիկով։

Որպէս զի այդ չարիքների դէմ առնվի, և որպէս զի հաշւապահները աւարտելուց յետոյ, ամիսներով ու տարիներով պարապ և կօպէկների կարօտ չը մնան, հարկաւոր է նախ չափաւորել հաշւապահութիւն սովորողների թիւը, երկրորդ՝ սովորեցնել ոչ թէ մի տասնեակ ուսում ունեցողներին, այլ, գոնէ, երեք դասատուները աւարտողներին. բացի սրանից հարկաւոր է, որ այժմեան գործակատարների ու հաշւապահների դրամարկղը լինի բոլորի համար պարտաւորեցուցիչ և հաստատուն հիմքերի վրա դրված, որպէս զի ամեն տեսակ օգնութիւն տրվի իրանց անգործ և չունևոր ընկերներին մինչև նրանց փող աշխատելը։

Ա. Գ.

ՆԱՄԱԿ ՍՈՒԽՈՒՄԻՑ

—

Սուխում, մարտի 21-ին

Մարտի 21-ին, մեր գաւառի Անօխա գիւղի քնակիչ Յ. Մ. երեկոյեան դէմ սայլով Ջրաղացից ալիւր էր բերում, մի քանի զինաւորված աբխազներ, անսպասելի կերպով, առաջը կտրում են. խեղճը, չունենալով ոչ մի զէնք, թողնում է ու հազիւ հազ փախչում ազատելով իր կեանքը։ Աւազակները, չը կարողանալով ՁԼասել մարդուն, արձակում են սայլից եղներն ու տանում։

Զանցաւ ընդամենը երկու օր, մարտի 23-ին, օր ցերեկով, երեք թէ չորս աբխազ, Գուդաուրի մօտ, խճուղու ճանապարհին, նկատելով մի գիւղացի ձիաւոր, իսկոյն առաջն առնում ու երկու անգամ ատրճանակ են արձակում նրա վրա։ Գիւղացին, բօլէպէս թռչում է ձիուց ու ընկնում գետին։ Աբխազները, ինչպէս երևում է, կարծելով գիւղացուն սպանված։ փախչում են անտառը, տանելով ձին էլ հետները. բայց բարեբախտաբար փամփուշտները ծակում են միայն զգեստը և գիւղացին ազատվում է մահից։

Յաջենայն դէպս այս շաբաթը առանց զոհի չանցաւ։ Կիրակի, մարտի 27-ին, ցերեկով, Թրսողա գիւղի բնակիչ Կարապետ Սունգուրեանը սայլով գնալիս է լինում Գուդաուտ ալիւր գնելու։ Գուդաուտի գերեզմանոցի մօտ երեք աբխազ, շրջապատելով Սունգուրեանի սայլը, ատրճանակի մի քանի հարուածով սպանում են նրան ու փախուստ տալիս։ Իսկոյն ատրճանակի ձայնի վրա հաւաքվում են մարդիկ, որոնք նկատելով փախչողներին, հետամուտ են լինում և մէկին ձերբակալում, իսկ միւսին սպանում են։ Այս և սրա նման շատ ուրիշ դէպքեր, վերջին ժամանակներս միանգամայն սարսափեցրին գիւղացիներին։ Գիւղացին ուզում է քաղաք գնալ վախենում է. կամենում է ջրաղաց գնալ ալիւր աղալու, որպէս զի պահպանէ, իր գոյութիւնը, դարձեալ վախենում է. կամենում է արտը գնալ հոգալու իր տնտեսական կարիքները, կասկածում է, որ կը յարձակվեն, իրան կը սպանեն, իսկ եղները կը տանեն։

Տեսնելով, որ կասկածները կամաց-կամաց ճշդվում են, մարդիկ սկսեցին լուրջ կերպով մտածել իրանց դրութեան մասին։

Անօխա գիւղի տանուտէր պ. Յ. Թաթոսեանը, մարտի 24-ին, հարևան աբխազների Աղցի գիւղի տանուտէրին ու պատուաւոր մարդկանց հրաւիրում է խորհրդակցել և միահամուռ ոյժերով եղբայրասպանութեան ու կողոպտման առաջն առնելու։ Թէպէտ աբխազների կողմից հրաւէր ընդունվում է, բայց դժբախտաբար խորհուրդը վերջանում է առանց որ և է բաւարար հետևանքի, որովհետև աբխազները խոստովանվում են, որ իրանք անզօր են դրա առաջն առնելու։

Այսպէս, առաջին փորձը վերջանում է անյաջող, գուցէ այն պատճառով, որ պակասում էին երկու կողմից ևս հեղինակաւոր մարդիկ կամ թէ չէ գոյութիւն ունի մի աներևոյթ կաշկանդող ձեռք, այդ մեզ համար մութն է. իսկ որ ժողովուրդը գտնվում է անապահով դրութեան մէջ, որ ժողովրդին սպառնում է նոյն իսկ տնտեսական քայքայումն, որ կասկածները կամաց-կամաց ճշդվում են, դրանք բոլորը արդէն իրականութիւն են։

Ա. Շ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Կողբ, ապրիլի 2-ին

Պատիւ ունեմ յայտնել խմբագրութեանդ, որ Ղազախի գաւառի Կողբի դպրոցի անունով ուղարկված «Մշակը», որի տարեկանը ես վճարել եմ իմ սեփական միջոցներից միայն, այն պայմանով, որ հասարակութիւնը իր վրա վերցնէր այդ պարտքը, բայց այժմ հասարակութիւնը չէ ուզում պարտաճանաչ լինել, իսկ ուսումնարանը ծախքերի համար կրեդիտ չունի։ Այդ բոլորը ոչինչ, տանելի են, բայց ցաւը նրանումն է, որ հասարակութեան անուանական վերաբերմամբ լրագրի ծախքերին, ամեն անհատ իրան իրաւունք է համարում լրագրի համարները ստանալ, նախքան դպրոց մտնելը, այնպէս որ շաբաթներով լրագիր չենք տեսնում։ Մարտի 18-ից դպրոցը լրագիր չէ ստացել։ Երկաթուղին կանոնաւոր պստատուն չունի, որ կարելի լինի խնդրել դպրոցի կորրէսպոնդենցիան ուրիշներին չը յանձնել. այդ հանգամանքից օգտվում են մարդիկ։

Ուսուցիչ Ա. Տէր-Դաւթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է $1^1/_2$ թերթից։ Կիսաթերթը պարունակում է Բագուի աղէտի զոհերի օգտին նուիրատուների ցուցակը։

—

Թիֆլիսի քաղաքագլուխն անցեալ օրն ստացաւ հետևեալ հեռագիրը քաղաքի կողմից Պետերբուրգ մեկնած պատգամաւորներից. «Այսօր, ընդհանուր ընդունելութեան օրը ներկայացանք փետրվարի 18-ի Բարձրագոյն ըէսկրիպտի ցանկութիւններն իրականացնող կօմիսսիայի նախագահ հոֆմայստէր Բուլիգինին։ Մեր, բագուցիների և երևանցիների խնդիրը մեզ ընդունել մի այնպիսի օր՝ երբ ընդունելութիւն չը կայ, չը յարգվեց։ Լսելով մեր զեկուցումը, ներքին գործերի մինիստրը մեզ յայտարարեց, որ խորհրդակցութեան անդամների կազմը պէտք է որոշէ Թագաւոր Կայսրը։ Խորհուրդը չէ կարող լինել բազմամարդ, բայց և այնպէս՝ մեր երկրի ինքնօրինակ պայմանների շնորհով, կը թոյլատրվեն մասնակցութեան և Անդրկովկասի եթէ ոչ բոլոր քաղաքների, գոնէ մի քանիսի ներկայացուցիչները։ Գենեռալ-լեյտենանտ Ousroգorսկի, իշխան Ա. Մ. Առղութեան-Երկայնաբազուկ, իշխան Վ. Ս. Միքելաձե։

—

Կովկասեան փոխարքայութեան գլխաւոր խնդիրներից մէկն էլ հողային հարցի կարգաւորումն է. այդ հարցը վերջին տարիները չափազանց սուր կերպարանք է ստացել։ Կովկասի փոխարքայի մօտ կազմվելու է մի առանձին յանձնաժողով, որի մէջ մտնելու են Կովկասի վարչութեան, քաղաքային և գիւղական կառավարութիւնների և հողատէրերի ներկայացուցիչները։ Յանձնաժողովի նպատակը պէտք է լինի կարգաւորել և խաղաղացնել ազգաբնակութիւնը և վերացնել հողային թիւրիմացութիւնները, ճշտութեամբ կարգաւորել մասնաւոր սեփականութիւն կազմող հողերի սահմանները, պարզաբանել հողային վէճերը անհատների, հիմնարկութիւնների և ընկերութիւնների միջև։ Փոխարքայի վարչութեան տակ են կենտրօնանալու և երկրի կրթական հարցերը, որոնք այժմ բաւական թոյլ կերպով են զարգացել։ Այժմ լիապէս հաւատում են, որ Թիֆլիսում բարձրագոյն դպրոց բանալու հարցը կը լուծվի։ Ներկայ փոխարքան լինելով մասնագիտական կրթութեան պաշտպան, անպատճառ շուտով ընթացք կը տայ այդ հարցին։ Փոխարքայութիւնը շուտով միջոցներ ձեռք պէտք է առնէ երդուեալ դատաւորների հիմնարկութիւնը ներմուծել Կովկաս և կարգաւորէ դատական գործն ընդհանրապէս։ (Б. Изв.)

—

Մենք հաղորդել էինք «Մշակի» երեկվայ համարում, որ հայ մամուլի և գրականութեան գործողների կողմից ուղարկվել են հեռագիրներ Կովկասեան Փոխարքային և ժուրնալիստների ժողովին։ Նոյն օրը Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Սուլթան-Կրիմ-Գիրէյին ուղարկվեց Ա. Բալանթարի ստորագրութեամբ մի հեռագիր հետևեալ բովանդակութեամբ. «Այստեղ գրականագէտներին սաստիկ վրդովեցնում է այն լուրը, որ իբր թէ Կօբէկօի յանձնաժողովի մէջ տատանվում են տալու ոչ ռուսական մամուլին այն իրաւունքները, ինչ որ ռուսականին։ Ամեն մի անհաւասարութիւն խորապէս վիրաւորական կը լինի տեղական մտածող հասարակութեան համար և կանճռռնիացնէ տեղական մամուլի կերպարանքը։ Զեզ համակրող գրականագէտների խումբը հաւատացած է, որ դուք ձեր կողմից կաջակցէք վերացնելու ամեն մի անհաւասարութիւն և անարդարութիւն»։

—

Եւրոպայի հայ ուսանողների միութիւնը Բերլինում ապրիլի 1-ին (նոր տօմար) բաց արեց իր VI համաժողովի նիստերը։ Նիստերին ներկայ են լինում 50-ից աւելի պատգամաւորներ զանազան քաղաքների հայ ուսանողութիւններից։ Նիստերը տևելու են մինչև ապրիլի 10-ը։ Կարդացվելու են 8 դասախօսութիւններ, որոնցից մէկը յատկապէս վերաբերվում է Բագուի արիւնոտ դէպքերին։

—

«Кавказъ» պաշտօնական լրագիրը ահա երրորդ օրն է լոյս չէ տեսնում իր գրաշարների գործադուլի պատճառով։

—

Ստացանք Բագուի աղէտի զոհերի օգտին 1) պ. Գ. Տէր-Պետրոսեանի միջոցով Ալէքսանդրօպոլում հաւաքած 62 ռուբլի 34 կօպ., 2) Միքայէլ Կիւրեղեանից 1 ռուբլի։ Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 25660 ռուբլի 11 կօպէկ։

—

Գուրիա-Մինգրելական թեմի վրացի հոգեորականութիւնը դիմել էր մարտի 23-ին իր առաջնորդ Դիմիտրի եպիսկոպոսին և խնդրել էր, որ թոյլատրվի թեմի հոգևորականներին ընդհանուր ժողով հրաւիրել ապրիլի 5-ին։ Եպիսկոպոսը մերժել էր։ Այժմ նրանք դիմել են Վրաստանի էկզարխին նոյն խնդրով։ Իսկ հոգևորականների ունեցած ընդհանուր ժողովը Դուշէթում Կանդէլակի քահանայի նախագահութեամբ, միաձայն որոշել է վերացնել այն բոլոր տուրքերը, որ հաւաքվում են գիւղացիներից հոգևորականների օգտին և խնդրել, որ քահանաներին նշանակվի տարեկան 1200 ռ., իսկ դպիրներին 300 ռ. տարեկան ռոճիկ։

—

Բագուի բօրսայի կօմիտէն ուղարկել էր Կովկասի փոխարքային մի շնորհաւորական հեռագիր, որով յոյս էր յայտնում խաղաղված և ծաղկած տեսնել Կովկասը։ Այդ հեռագրին փոխարքան պատասխանել է այսպէս. «Բօրսայի Կօմիտէի նախագահ Ս. Ս. Թաղիանոսեանին։ Անկեղծաբար շնորհակալ եմ Բագուի բօրսայի ընկերութեանը արտայայտած բարեմաղթութիւնների համար։ Յոյս ունեմ, որ հասարակական ոյժերն ինձ կօգնեն լիակատար խաղաղութիւն հաստատելու ինձ համար սիրելի Կովկասում՝ նրա բարգաւաճման համար»։ Կոմս Վորոնցով-Դաշկով։

—

Մարտի 23-ին և 24-ին Սուխում են հասել կուբանեան կազակների երկու հարիւրեակ։ Դրանցից 50 հոգի ուղարկել են Օչէմչիրի աւանը, 50 հոգի էլ մնացել են Գուդաուտի շրջանը, վերականգնելու կարգը, որ խանգարել էին աբխազները մի քանի ռուսական գաղթական գիւղերում. իսկ դրանց գլխաւոր նպատակը լինելու է ստիպել աբխազներին վճարել հարկերն ու տուրքերը, որ նրանք մերժում էին վճարել կառավարութեանը։

—

Սէնաքի գաւառի (Բութայիսի նահանգ) Քվաւտի գիւղից գրում են «Н. О.» լրագրին, որ այնտեղ էլ սկսվել է շարժում գիւղացիների մէջ. ներկայումս այդ շարժումն այլ ևս նախկին աղմկալի բնաւորութիւնը չունի։ Այդ գիւղում չեն այրել գիւղական ատեանը, ասելով, որ դա հասարակութեանն է պատկանում. տարել են դուրս միայն թղթերն ու գործերը և այրել։ Նոյնպիսի դատողութիւնների հիման վրա պահպանել են և եկեղեցին և պարտադիր դարձրել յաճախել այնտեղ կիրակի և տօն օրերին։ Մինիստրական դպրոցը փակել են. իսկ ծխական դպրոցի միայն մի քիչ ծրագիրն են փոփոխել։ Ազնուականութիւնը միացել է և միասին է գործում ռամիկների հետ։ Այլ ևս նրանց «բատօնօ» (պարոն) չեն կոչում։ Պաշտօնեաներին արտաքսել են և նրանց տեղ նշանակել իրանց ընտրած «ասխպավի»-ներին (հարիւրապետ) և ուրիշ ընտրվի պաշտօնեաներին։ Ոստիկանութիւնը հաւատում է իր ընտրած անձերին և այժմ կարգը բոլորովին հաստատված է. այլ ևս չը կայ այն թշնամական վերաբերմունքը ժողովրդի և ազնուականութեան, ժողովրդի և հոգևորականութեան միջև, ինչ որ առաջ խիստ աչքի էր ընկնում և սաստիկ լարված էր։

—

Զուգդիդի գաւառի Զաքվինջի գիւղում մարտի 29-ին մի խումբ մարդիկ թագստեան տեղից կրակ արին զուգդիդեան գաւառապետի վրա, որը գնում էր՝ շրջապատված 15 ստրաժնիկներով և կազակներով։ Սկսվում է հրացանաձգութիւն, որի ժամանակ սպանվում է գաւառապետի օգնականի ձին և վիրաւորվում են 2 կազակ։ Իսկ յարձակում գործող գիւղացիներից վիրաւորվել է մէկ հոգի, որին առնելով, ընկերներն անհետացել են։

—

Տիկին Կ. Լիսիցեանին թոյլատրված է հրատարակել Թիֆլիսում «Հասկեր» անունով հայերէն մանկական և մանկավարժական պատկերազարդ ամսաթերթ հետևեալ ծրագրով. I. «Նուէր մանուկներին» 1. Բելլետրիստիկական գրուածքներ արձակ և ոտանաւոր վէպեր, պատմուածքներ, պատկերներ, դրամատիկական գրուածքներ, պօէմներ, բանաստեղծութիւններ, առակներ և ուրիշ գեղարուեստական երկեր։ 2. Կենսագրութիւններ։ 3. Ճանապարհորդութիւններ։ 4. Գիտական-հանրամատչելի յօդուածներ աշխարհագրութիւնից, պատմութիւնից, բնագիտութիւնից և գիտութեան միւս ճիւղերից։ 5. Գեղարուեստին վերաբերեալ յօդուածներ։ 6. Այլ և այլք և մանր լուրեր։ 7. Ֆիզիքական փորձեր, խաղեր, շարադներ, ռէբուսներ և ուրիշ զուարճութիւններ։ 8. Թղթակցութիւն մանուկ ընթերցողների հետ։ II. «Նուէր ծնողներին». 1. Յօդուածներ և զեկուցումներ ֆիզիքական, մտաւոր և բարոյական կրթութեան զանազան հարցերի մասին։ 2. Նորութիւններ դպրոցական կեանքից և մանկավարժական գրականութիւնից։ 3. Մատնանշումներ և քննադատութիւն մանկավարժական և մանկական գրքերի։ 4. Այլ և այլք և մանր լուրեր։ 5. Խորհուրդներ, հարցեր և պատասխաններ։ 6. Պօստարկղ, Յայտարարութիւններ, Պրէմիաներ՝ գրքեր։ Տարեկան բաժանորդագինը՝ առաջին բաժինը 3 ռուբլի, երկրորդի հետ միասին 4 ռուբլի։ Լսում ենք, որ նոր ամսագիրը կը սկսի հրատարակվել սեպտեմբեր ամսից մշտական աշխատակցութեամբ պ. Ստեփան Լիսիցեանի։

—

Պետերբուրգից Գաստոն Դրիւն հեռագրում է «Echo de Paris» լրագրին. «Տեղեկացայ, որ արտաքին գործերի մինիստրը վճռել է հրատարակել մի գիրք Հեռաւոր Արևելքի գործերի մասին։ Փաստաթղթերի կարգաւորումը յանձնված է բարօն Ռոզէնին, Տոկիօի նախկին ռուսական դեսպանին»։—«Պետական խորհրդի անդամ կոմս Տօլի մօտ կայացաւ վերին աստիճանի կարևոր մի խորհրդակցութիւն բարձր պաշտօնատար և արիստոկրատ անձերի, կոմս Ալէքսէյ Բոբրինսկու նախագահութեամբ։ Ներկայ էին 42 հոգի, որոնցից մի քանիսը պետական խորհրդի անդամ։ Ժողովը որոշեց միանալ այս օրերս ազնուականների ընդունած վճռին, որով անհրաժեշտ ճանաչվեց կազմել մի միութիւն Բարձրագոյն ըէսկրիպտի ոգու համաձայն։ Հարցն այստեղ վերաբերվում է սահմանադրական աշակողմեան մի կուսակցութիւն կազմելուն, որը կարելի է նմանեցնել Ֆրանսիական պարլամէնտի աշակողմին։ Այդ կուսակցութիւնը շատ մեծ դեր պէտք է խաղայ երկրի ներկայ քաղաքական էւօլիւցիայի մէջ»։—Նոյն լրագրին հեռագրում են, որ մարտի 24-ին Հէլսինգֆորսում ձերբակալվեց տիկին Կատանցեվան, Մօսկվայի մի բժշկի կին։ Նա ծնվել է Հէլսինգֆորսում և ապրում էր այն տեղ իր զաւակների հետ։ Շրջապատողներից ոչ ոք նրան ընդունակ չէր համարում որ և է քաղաքական յանցանքի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Կրկին խօսակցութիւն գեներալ Բատիանովի հետ։ Գաստոն Դերրիւ հեռագրում է «Matin» լրագրին Պետերբուրգից, մարտի 25-ին.

«Ես հէնց նոր գեներալ Բատիանովի մօտ էի, որ չը նայելով մեկնելու իր բոլոր պատրաստութիւններին, երկրորդ անգամ ընդունեց ինձ։

«Ահա մի մարդ, որի հետ չը պէտք է խօսել խաղաղութեան մասին և որը անսասան հաւատում է պատերազմի շարունակութեանը։ Նա մի շաբաթից յետոյ Մանջուրիա է գնում և համոզված եմ, որ նա հէնց ժամանակին կը հասնէ առաջիկայ պատերազմին մասնակցելու համար։ «Յապոնացիները,—ասում է նա,—նոյնպէս մարդիկ են և նրանք չեն կարող շարունակել կռիւը, առանց օգտվելու անհրաժեշտ հանգստութիւնից։ Այժմ 280,000 մարդու գլուխ կանգնած Լինեվիչ բաւական ժամանակ կունենայ զօրքը վերակազմելու և շատ օգտաւէտ օժանդակ զօրքեր ստանալու համար»։

«Խաղաղութեան մասին խօսք էլ չէ կարող լինել,—նորից կրկնում է գեներալը,—գոնէ նախ քան կը կատարվեն պատերազմի բեմի վրա դէպքեր, որոնց ղեկավարը կը լինի նոր գլխաւոր հրամանատարը»։

«Ի՞նչպէս կարող էք մտածել, որ եապօնացիների հետ բանակցութիւններ կը սկսեն նախապէս չը հրաժարվելով այն բոլոր յոյսերից, որ դրվում են ծովապետ Ռօժէստվէնսկու վրա։ Մի թէ այնքան ահագին ջանքեր գործ դնելով կազմեցինք այնպիսի սպառնալի նաւատորմ, և ծովապետ Ռօժէստվէնսկին անշնաս անցկացրեց նրան այնքան հեռու դէպի Արևելք նրա համար միայն, որ վճռական րոպէին հրաժարվի հայրենիքի համար բաղդը փորձելու դիտաւորութիւնից։ Եւ երբ, ծովային ահագին պատերազմից յետոյ, եապօնացիների զօրութիւնը ծովի վրա ջնջված կը լինի, և եապօնական հաղորդակցութիւնները յենակէտի հետ եթէ ոչ վերջնականապէս կը կտրվեն, գոնէ պատահականութիւնների վտանգին կենթարկվեն,—այն ժամանակ միայն կարելի կը լինի խօսել խաղաղութեան մասին։ Եւ խաղաղութիւնը կը խնդրեն եապօնացիները»։ (P. Cn.)

Ռօժեստվենսկու դժուարին խնդիրը։ Բերլինի բոլոր լրագրները խօսում են ռուսական նաւատորմի առաջիկայ պատերազմի մասին եապօնականի հետ և այն եզրակացութեան են գալիս, որ ծովապետ Ռօժէստվէնսկուն վիճակված է ի կատար ածել մի շատ դժուար խնդիր։ Արդեօք կաջողվի նրան յետ մղել եապօնացիների յանկարծակի յարձակումը, որոնց ծովային տեղափոխութիւնները նոյնքան գաղտնի են, որքան և ցամաքային շարժումները։ Հնարաւոր է, որ Ռօժէստվէնսկուն աջողվի մաս-մաս ջարդել եապօնացիներին, բայց յամենայն դէպս դա յաղթութիւն չէ, որովհետև նա չունի արագընթաց կրէյսէրներ, որոնք կարող լինէին հալածել ջարդված թշնամուն։ Իսկ պարտութիւնը պէտք է վերջ դնէ պատերազմին։ Մուկդէնի մօտ պարտութիւնը Ռօժէստվէնսկին իմացաւ, ինչպէս կարծում են, հիւպատոսից Սինգապուրում էսկադրայի անցնելու ժամանակ։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Մէշէդ, մարտի 24-ին

Մարտի 9-ին Մէշէդում պատահած խռովութիւնների և պարսիկ ամբոխի ձեռքով մի քանի ռուսահպատակների ամբաւ, խանութ և տներ թալանելու մասին արդէն տեղեկացել են, ինչպէս երևում է, թէ ձեր և թէ ռուսաց լրագիրներից. սակայն մինչև այժմ լոյս տեսած տեղեկութիւնների մէջ, նկատելով փաստերի յեղաշրջումներ, աւելորդ չեմ համարում հետևեալ տեղեկութիւնները տալ, խնդրելով տպագրել, որպէս զի ընթերցողները ճիշդ տեղեկութիւն ունենան անցքի մասին։

Մարտի 8-ին երեկոյեան «Бюро персидскихъ транспортовъ» փոխադրական ընկերութեան մի ամբաւ—քարվանսարայի առաջ խռնվում է մեծ բազմութիւն, որը սկսում է տարածել ամբոխի մէջ, իբր թէ այդ քարվանսարայի պահապան պարսիկը առևանգել է մի պարսկուհու և ձգել դէպի քարվանսարան, կինը աղաղակ է բարձրացրել, որի ձայնի վրա հաւաքվել են մարդիկ կնոջը ազատել և պարսիկ պահապանին ծեծել, և այժմ ամբոխը պէտք է հանէ այդ քարվանսարայում ապրող հային սպանէ և ունեցածը թալանելով՝ քարվանսարան այրէ, բայց չը գտնելով այնտեղ ոչ հայի, ոչ ռուսի և ոչ որ և է եւրոպացու, ամբոխը ցրվում է քաղաքապետի կողմից ղրկված մարդկանց միջոցով, իսկ պարսիկ պահապանը ձերբակալվում է։ Սակայն ամբոխը չէ հանգստանում և ասում են, որ ամբողջ գիշերը շատերը շրջապատում են քարվանսարան, մտածելով, որ մէջը բնակվող քրիստոնեան կարող է փախչել։ Մարտի 9-ին առաւօտեան հետզհետէ ամբոխի թիւը շատանում է և յարձակվում են քարվանսարայի վրա, նախ կոտրտում են ամբարների դռները, դուրս տանում բոլոր մորթեղէն ապրանքները և բրդի հակերը. երբ թալանը վերջացնում են, հրդեհում են քարվանսարան։ Նահանգապետի և քաղաքապետի ձեռք առած միջոցները անզօր էին թալանի առաջն առնելու։

Բիւրօյի այդ քարվանսարայում մի քանի ամիս առաջ ապրում էր Լ. Երմանի ներկայացուցիչ Կասում Թիւմենիով թաթարը, իսկ յունվարին և փետրվարի սկզբներում մի ռուս Անդրէյ Զլիգոստովը, որը փետրվարին է գնացել Ասխաբադ. իսկ հայ ոչ այժմ է բնակվում այդ քարվանսարայում, ոչ էլ անցեալներում է բնակվել, այդ գիտեն Մէշէդում բոլոր ապրողները, հետևապէս հայի անուամբ տարածված այդ լուրը միանգամայն զուրկ է ճշմարտութիւնից։ Խռովութիւնների բուն պատճառը և հեղինակները դեռ չեն պարզաբանված հաստատապէս, բայց ընդհանրապէս մեղադրում են մի քանի անձնաւորութիւնների, որոնց մեքենայութիւնն են համարում պատճառ։

Պէտք է ասել, որ Բագուի տխուր դէպքերից յետոյ, ժողովրդի տրամադրութիւնը գրգռված էր այստեղ բնակվող քրիստոնեաների դէմ։ Խռովութիւններ սպասվում էին մարտի 4-ին Մհառամի օրերին, բայց նահանգապետի ձեռք առած խիստ միջոցներով հնար եղաւ կարգը պահպանել։

«Մշակի» № 45-ում առաջնորդող յօդուածից երևում է, որ «Նաղեժդա» ընկերութեան այստեղի գործակալը հեռագրել է Թիֆլիսի իրանց կառավարչին, որ առիթ ծառայել է իբր թէ մի հայի ձեռքով մի մահմեդական կնոջ առևանգումը։ պ. գործակալը լաւ ծանօթ լինելով բոլոր հայերի բնակավայրերին և տեղեակ լինելով, որ դէպքը տեղի ունեցած տեղում (եթէ տեղի է ունեցել) երբէք հայ չէ բնակվել, բարեխղճութեան դէմ է գործել միայն պարսիկների ասածն արձանագրելով։ Իսկ պարսիկները տարիներից ի վեր աւելի շատ հայ տեսնելով և հայի հետ գործ ունենալով, տրամադիր են ամեն եւրոպական գլխարկ և հագուստ ունեցողին հայ անուանել։ Պ. գործակալը ճիշդ չէ արձանագրել և այն, որ իր հեռագրում միայն հայերի համար է ասում, որ ապատանված էին հիւպատոսարանում։ Ինքը պ. գործակալը իր կնոջ և «Նաղեժդայի» բոլոր ծառայողների հետ նոյնպէս հիւպատոսարանում էին գտնվում, ինչպէս և մի քանի ռուս ֆիրմաների ներկայացուցիչները իրանց ընտանիքներով։ Պ. գործակալը աւելացնում է, որ հայերի դէմ նկատվում է գրգռված տրամադրութիւն։ Այդ էլ միայն հայերի հացէին ասելը ճշմարտութեան դէմ է։ Խռովութեան օրը բոլոր քրիստոնեաների դէմ էր պարսիկների գրգռված տրամադրութիւնը և ոչ միայն հայերի։

Խռովութիւնների ժամանակ առաջացած վնասները հասնում են մօտ 120 հազարրուբլու։

Ի դէպ՝ եղբ. Տէր-Մկրտչեանց առևտրական տան խանութներից թալանի ժամանակ ազատվել է 4 արկղ ղռան, գումարը 10 հազար թուման շնորհիւ առևտրական տան մի թուրք ծառայողի հաւատարմութեան, որը մինչև ամբոխի հասնելը կարողացել էր թագցնել տանը բաղնիսում ղռանի արկղները։

Վնասների ցուցակները ներկայացրված են ռուսաց հիւպատոսարանին և վերջինիս կողմից պարսից վարչութեանը։

Մ. Մ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

4 ապրիլի

ՊԱՐԻԶ։ Կիսապաշտօնական մի լուր է հրատարակված, որը հաստատում է, թէ Դէլկասէի և Բերլինի մէջ սկսված է մտքերի փոխանակութիւն Մարօկկօի առիթով։—Մարտինիկայից եկած լուրերը հաղորդում են, որ Մօնպէլէ հրաբուխը գործում է և լաւայի հեղեղներ է դուրս վիժում։—Մադրիդից ստացված մի հեռագիր է հրատարակված, որ Բարցելօնայի բերդապահներից ձերբակալել են 2 կապիտաններ. նրանք մեղադրվում են պետական դաւադրութեան մէջ։ Իբր թէ գործն իսկական զինուորական ապստամբութեան կերպարանք պէտք է ունենայ, որին գլխաւոր գեներալները խոստացել են օգնել։ Զինուորական իշխանութիւնները հրաժարվում են տեղեկութիւններ տալ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ինֆանտէրիայի գեներալ Լինեվիչի հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով, ապրիլի 3-ին. «Բանակներում փոփոխութիւններ չը կան։ Մեր ձախ թևի մի զօրամասում մարտի 29-ին սկսվեց հրաձգութիւն առաւօտեան ժամը 11 ին Իւխուլի գիւղի մօտ, թշնամու հետ, որը այդ գիւղի հիւսիս-արևմտեան կողմի բլրաշղթայի վրա դիրքեր էր բռնել։ Ժամը 11-ին մեր թնդանօթները կրակ բացին եապօնացիների վրա, իսկ հետևակազօրը պատերազմական ձևով շարվեց։ Ժամը 11½-ին թշնամին մաքրեց դիրքերը, այդ պատճառով էլ զօրամասին հրաման տրվեց առաջ խաղալ գրաւելու հետևեալ լեռնանցքը։ Ճնշելով հակառակորդին և անցնելով նրա թևերի թիկնակողմը, զօրամասը հասաւ Մէհեան գիւղը։ Թշնամին նահանջեց դէպի Նանցայմուխէյլ, Մէհեանից 3 վերստ հարաւ-արևմուտք։ Հետևեալ գործողութիւնների մասին զեկուցումներ չեն ստացվել»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Լինեվիչի հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեանը ապրիլի 3 ից. «Մարտի 29-ին մեր զօրամասը ճնշեց և հալածեց եապօնացիներին և ստիպեց մաքրել Իւխուլզի մօտ բռնած իր դիրքը. հալածելով նրան մերոնք հասան Մէհեան գիւղը։ Եապօնացիները բռնեցին Նանցայմուխէյլի մօտի լեռնանցքը և բլրաշղթան, գիւղից 2 վերստ հեռու։ Թշնամու դիրքը հարուածելով և անցնելով նրա թևերի թիկնակողմը, մեր զօրքն ստիպեց թշնամիներին թողնել իրանց դիրքը և յետ քաշվել։ Լեռնանցքի վրա կային 35 փոսեր։ Նահանջելով՝ եապօնացիները այրեցին Նանցայմուխէյլայի պաշարեղէնի մեծ պահեստը։ Մարտի 30 ին զօրամասը, անցնելով Երխէյա գիւղը, հանդիպեց թշնամու հետևակազօրի և երկու գնդաձիգների կրակին Սեավայցզիից և Ալուխադիից։ Արտիլէրիական կրակ թափելով, մեր զօրքերը բարձրացան հակառակորդի դիրքերի վրա, որ գրաւել էր հետևակազօրը հինգ գնդաձիգներով։ Եապօնացիները յամառ դիմադրութիւն ցոյց տուին»։

ՀՌՕՄ, 4 ապրիլի։ Միլանում և Տուրինում սկսվեց երկաթուղու ծառայողների գործադուլ։ Լրագիրների մեծ մասը և հասարակական կարծիքը թշնամաբար են վերաբերվում գործադուլին։ Պարլամենտում նախագահը յայտնեց, որ գործադուլի առիթով ամեն տեսակ զգուշութեան միջոց ձեռք առնվեց։

ԲԵՐԼԻՆ։ Մարօկկօի հարցի առիթով հաղորդում են, որ գերմանական դեսպանի մօտ ճաշի ժամանակ Դէլկասէն ցանկութիւն յայտնեց այցելել դեսպանին հետևեալ առաւօտ, խօսելու Մարօկկօի մասին։ Ուրբաթ օրը Դէլկասէն գերմանական դեսպանի մօտ էր և խօսակցեց առանց վկասերի։ Սակայն հարցի մանրամասն քննութիւն չեղաւ։

ԳԱՆՁԱԿ։ Տեղեկութիւն է ստացվել, որ այսուհետև դադարեցվում է ազատ հողաբաժինները ռուս գաղթականներով բնակեցնելու գործը։

ՄՕՍԿՎԱ։ Մի քանի լրագիրների հաղորդած այն լուրը, որ Մոսկվայի շուրջը գիւղացիական խառնակութիւններ են տեղի ունեցել և որ կալուածատէրերը տեղափոխվում են Մոսկվա, այդ լուրը հերքվում է։

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ։ Սէնատի առաջարկին Հէլսինգֆորսում պատմա-արխէոլոգիական մուզէում հիմնելու մասին՝ Բարձրագոյն համաձայնութիւն տեղի ունեցաւ։

ԼՕՆԴՕՆ։ Կոմս Բէնկէնդորֆն այսօր ցերեկով այցելեց Լանսդաունին և խօսակցեց նրա հետ 20 րոպէ։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Կայսրը վճռեց անպայման մերժել զինուորը, որը կարող է գոյութիւն ունենալ ի վնաս բանակի միութեան։

5 ապրիլի

ՍԻՆԳԱՊՈՒՐ, 4 ապրիլի։ «Դէվավոնս» շոգենաւը ապրիլի 2 ին առաւօտեան բալտիական էսկադրայից առաջ անցաւ Վարելի հրուանդանի մօտ։

ԼՕՆԴՕՆ։ Տօկիօից հեռագիրը հաղորդում է տեղական եապօնական իշխանութիւնների պաշտօնական ծանուցումը, որ ապրիլի 2-ին բալտիական էսկադրան տեսան Կամբուգեան ծովախորշում Աննամեան ծովափի վրա 160 մղոն դէպի հիւսիս-արևելք Սայգօնից։ Հոնկոնգից հեռագիրը հաղորդում է, որ Բանկոկից գնացող «Բրունսիլդ» շոգենաւը կանգնեցրվեց պատերազմի համար կատարելապէս պատրաստ ռուսական երեք կրէյսէրների կողմից ապրիլի 3-ին 60 մղոն դէպի հիւսիս Պատարան հրուանդանից աննամեան ծովափի վրա։ Ռուսները քննութեան ենթարկեցին և թոյլ տուին շարունակել ճանապարհը։ Կապիտան «Բրունսիլդա» հաշուեց 33 ռուսական նաւ, որոնք գնում էին դէպի հիւսիս 10 հանգոյցի արագութեամբ։

ԲԵՐԼԻՆ։ Զուրկ է հիմքից լրագրական տեղեկութիւնը՝ Վիլհէլմ կայսրի ենթադրեալ տեսակցութեան մասին անգլիական թագաւորի հետ Միջերկրական ծովի վրա։—Դէլկասէի ծանուցումը այն մասին, որ դաշնագիրը Մարօկկօի հետ պաշտօնապէս կը հաղորդվի գերմանական կառավարութեանը Բերլինի ֆրանսիական դեսպանի միջոցով՝ մինչև այժմ անկատար է մնում։ Դէլկասէի այդ վարմունքի նպատակն էր նորից խուսափել հետևեալ հարցապնդումի ժամանակ մանրամասն պատասխանեց այդ գործի վերաբերմամբ։

ԱՄՕՅ, 4 ապրիլի։ Եապօնացիները երկար ժամանակվայ ընթացքում սպասում էին բալտիական էսկադրային Ամոյի մօտ։ Զինական իշխանութիւնները երևան հանեցին դեղերի ընդհանուր պահեստ։ Եապօնացիները գաղտնի ձեռք բերին Ամոյեան նաւահանգստում գտնվող կղզեակի մի փոքր մասը։

ԼՕՆԴՕՆ։ «Լլոյդի» ծովային ապահովագրողների շրջաններում քիչ հաւատ են ընծայում պատվող լուրերին, թէ եապօնացիները գրաւել են ռուսական ածխատար նաւերը։ Մի այդպիսի գրաւումն շատ նշանաւոր հաղորդագրութիւն կը լինէր և «Լլոյդ» առաջինը կը ստանայ այդ տեղեկութիւնը։ Ռուսական էսկադրային ուղեկցող ածխատար փոխադրիչները եապօնացիների օբիէկտ են ներկայացնում, բայց գրաւումը չէ կարող կայանալ առանց սկզբնական կռուի, որի մասին ոչինչ չէ լսվում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ապրիլի 4-ին, երեկոյեան 11 ժամին, ուղևորվեց Հեռաւոր Արևելք երրորդ բանակի հրամանատար Բատիանով։

5 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրամայված է լինել. գլխաւոր-կվարտիրմայստր գեներալ-մայոր Էվերտին մանջուրական I բանակի պատերազմական շտաբի գլխաւոր՝ դառնալով գեներալ-լեյտէնանտ. մանջուրական I բանակի գլխաւոր-կվարտիրմայստր Օրանովսկուն՝—գլխաւոր հրամանատարի շտաբի կվարտիրմայստէր. Պետերբուրգի քաղաքապետի օգնական Ֆրիշին—ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ։

ԳՈՒՆԺՈՒԼԻՆ, 4 ապրիլի։ (Սեփ. թղթ.)։ Պատերազմի բեմում փոփոխութիւններ չը կան։ Մանգօլիայից նոր վերադարձած մարդկանց խօսքի համաձայն՝ Լեաօխէի ափերին եղած Մանգօլիայի մասերում եապօնացիների ներկայութիւնը չէ նշմարված։ Ամեն կողմ նկատվում են խունխուզների զինված խմբեր, որոնց հետ ստիպված են յամախակի հրացանաձգութիւններ ունենալ։

